

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_ \_\_\_ 2026 թվականի N \_\_\_ -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 6-ի «Կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում անկաճ, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված կենդանիների փոխհատուցման կարգը և կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմանները, դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 846-Ն որոշման (այսուհետ՝

Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

**1) Որոշման N 1 հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր 1.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝**

«**1.1)** Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը.».».

**2) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

«**բ.սույն Որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով սահմանված հիվանդություններից** անկաժ, ոչնչացված կամ սանիտարական սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ ըստ նույնականացման համարի (խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դեպքում), կենդանատեսակի, սեռահասակային խմբի, քաշի,».».

**3) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի «դ.» պարբերությունում «դեպքում» բառը փոխարինել «ընթացքում» բառով.**

**4) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.**

**5) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝**

«5) կենդանիների հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածման գոտիների ճշգրտումը:».».

**6) Որոշման N 1 հավելվածի 20-րդ կետում «55» թիվը փոխարինել «45» թվով և «չափով» բառից հետո լրացնել «(առավելագույնը 500 գլխի համար):» բառերը.**

**7) Որոշման N 1 հավելվածը լրացնել նոր՝ 21.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝**

«**21.1.** Կենդանու սեփականատիրոջ կողմից Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի Կոլեգիայի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 27 որոշմամբ սահմանված անասնաբուժասանիտարական պահանջները չպահպանելու դեպքում փոխհատուցումը մերժվում է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 120-րդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ